# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ, ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/1, 36/2, 36/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՔԵՆԱՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՏԵԽՆՈՊԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Լրամշակված/

Երևան – 2025

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 3

Ձեռնարկողի մասին տեղեկություն ........ 3

1.1 Հապավումներ ........ 3

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը ........ 4

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) ........ 7

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր ........ 7

էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ 9

1.3.2 Երկրաֆիզիկական ուսումնասիրություններ ........ 10

1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում ........ 14

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ 14

1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ ........ 15

1.3.6 Կաղրային ապահովում և շինտեխնիկա ........ 17

1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում ........ 20

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ........ 23

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ........ 23

2.2 ԿԼԻՄԱՆ ........ 26

2.3 Օդային ավազան ........ 29

2.4 Ջրային ռեսուրսներ ........ 32

2.5 Հողերի նկարագիրը ........ 33

2.6 Հիմնային աշխատանքներ ........ 33

2.7 Կենսաբազմազանություն ........ 33

2.8 Թափոնների կառավարում ........ 35

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ36

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ........ 36

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ........ 37

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ........ 37

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ ........ 37

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ........ 38

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ........ 38

3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ........ 39

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ ........ 40

3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ........ 40

3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ........ 42

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ........ 46

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ........ 47

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ ........ 50

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ........ 51

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ........ 52

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

| | |
|---|---|
| Նախատեսվող գործունեություն | ՀՀ Սյունիքի մարզի, Կապան համայնքի Կապան քաղաքի Գործարանային փողոց թիվ 36/1, 36/2, 36/3 հողամասերում Կապանի համայնքի կարիքների սպասարկման համար մեքենամեխանիզմների տեխնոպարկի կառուցում |
| Նպատակը | Կապանի համայնքի կարիքների սպասարկման համար մեքենամեխանիզմների տեխնոպարկի կառուցում |
| Նախագծի պատվիրատու | Կապանի համայնքապետարան |
| Ձեռնարկող | Կապանի համայնքապետարան |
| Ձեռնարկողի հասցե | ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան քաղաք, Չարենցի փողոց թիվ 1 |
| Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս | Հեռ. 094 65 94 44 |
| Նախատեսվող գործունեության վարչական տարածքը | ՀՀ Սյունիքի մարզի, Կապան համայնքի Կապան քաղաք |
| Կառուցապատվող հողամասի մակերեսը | 0.57499 հա |

### 1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Կապանի համայնքի կարիքների սպասարկման համար մեքենամեխանիզմների տեխնոպարկի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի, Կապան համայնքի Կապան քաղաք, գործարանային փողոց, թիվ 36/1, 36/2, 36/3 հողամասերում, (ծածկագիրը՝09-001-0550-0009, 09-001-0550-0011, 09-001-0550-0012, 09-001-0550-0113), էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության տրանսպորտային նշանակության հողերում: Ընկերության կողմից սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ Սյունիքի մարզի, Կապան համայնքի կողմից 16.12.2024թ տրված N 196 նախագծման թույլտվությունը, ինչպես նաև վերոնշյալ նախատեսվող գործունեության ճարտարապետաշինարարական նախագիծը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**Իրավական հիմքերը**

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),

3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),

4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),

5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),

6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),

7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),

8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009- 06 հաստատելու մասին”

12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության

լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման։

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության
բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը։

22. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մարտի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III –
11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին։

23. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 22-04-2014

<<Պաշտպանություն աղմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին։

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ,

օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

### 1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կապանի համայնքապետարանի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան քաղաք, Չարենցի փողոց թիվ 1:

Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել Սյունիքի մարզի Կապան համայնքի, Կապան քաղաքի Գործարանային փողոց թիվ 36/1, 36/2, 36,3 հասցեներում 0,57499 հա մակերեսի վրա,: Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայանի կառուցում, որտեղ կիրականացվի մեքենաների տեխնիկական սպասարկում, զննում, նորոգում, լվացում:

*Առկա իրավիճակի նկարագրություն*

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի, Գործարանային փողոց թիվ 36/1, 36/2, 36,3 հասցեներում Կապանի համայնքապետարանը մտադիր է կառուցել Կապանի համայնքի կարիքների սպասարկման համար մեքենամեխանիզմների տեխնոպարկ: Հողամասը գտնվում է Կապան քաղաքում, Երևան-Կապան մայրուղու ձախակողմյան մասում: Այն իրենից ներկայացնում է ազատ տարածք, ծառերի բացակայությամբ, երկու կողմից կառուցապատված այլ արտադրական նշանակության սեփականություն հանդիսացող շենք-շինություններով:

Հատկացված տարածքը նախատեսված է կառուցապատել տեխնոպարկի մեքենամեխանիզմների համար որպես կայանատեղի և սպասարկման նպատակով:

Տարածքը կառուցապատված է պարազծով, որը իր հերթին բաժանված է երեք հատվածների՝ վերին, միջնամասային և ստորին շարքեր: Վերին շարքում նախատեսված են բաց 14 միավոր տեխնիկայի համար շվաքարաններ 5մ բարձրությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս շարքի շվաքարանի ետնամասում գտնվող տեղանքը մոտ 3,0մ բարձրությամբ բարձր է հավաքակայանի նիշից, նախատեսված է քարաբետոնյա հենապատ:

Միջնամասի շարքում նախատեսված է ևս բաց 7 միավոր տեխնիկայի համար շվաքարաններ 5մ բարձրությամբ:

Ձախակողմյան շարքում տեղակայված են բաց բոքսեր, թվով 5հատ 8մ բարձրությամբ, տարբեր ֆունկցիաների՝ սպասարկման, վերանորոգման և որպես պահեստներ:

Ստորին շարքում տեղակայված են բակ բոքսեր, թվով 10հատ 8մ բարձրությամբ, տարբեր ֆունկցիաների՝ սպասարկման, վերանորոգման և որպես պահեստներ, մեքենաների պահեստային մասերի, շինանյութերի, տնտեսության համար, առաջին անհարժեշտ ապրանքների համար:

Ըստ առաջադրանքի նախատեսված են բաց և փակ տարածքներ, յուղերի պահպանման համար պահեստներ, մեքենաների նորոգման տարածք, որը առանձնեցված է ընդհանուր տարածքից, նախատեսված է օդափոխության համակարգ:

Որոշ փակ բոքսերում նախատեսված են փոսորակներ, մեքենան տակից զննելու և նորոգելու համար:

Ըստ առաջադրանքի առանձին տարածքում նախատեսված է երկու հատ ճնշումով մեքենաների լվացման կայան: Հարկ է նշել, որ լվացման կայանում նախատեսված է ջրի մաքրման սարքեր, որը կհեռանա տարածքից խողովակաշարով՝տեխնիկական պայմանի համաձայն:

Մեքենաների տեխնոպարկի տարածքը նախատեսված է ցանկապատել կանոնավոր տուֆե քարով, լվացման կայանը ցանկապատը նախատեսված է մետաղից, իսկ գոյություն ունեղոց պարիպը սվաղել ց/ավազե շաղախով:

Տարածքի ճանապարհի կից հատվածում նախատեսված է երկու հարկանի վարչական մասնաշենք, նկուղային հարկով: Նշենք, որ նկուղային հարկը ծառայելու է որպես թաքստոց, աշխատակիցների և շրջակա աշխատակիցների և բնակչության համար: Նկուղային հարկը ունի առանձին մուտք և ելք, որոնք տեղակայված են իրարից հնարավորինս հեռու:

Պահպանելով թաքստոցի նորմատիվ պահանջները, նախատեսված են զուգարաններ, առանձին դիզ. գեներատորի տարածք, պահեստ տարբեր նշանակության իրերի համար:

Վարչական շենքի առաջին հարկում նախատեսված է աշխատակիցների կենցաղային նշանակության տարածքներ՝ ցնցուղարան, զուգարան, հանդերձարան, կահավորված յուրաքանչյուր աշխատակցի համար 50 հատ զգեստա պահարաններով, ճաշասրահ: Հարկ է նշել, որ կենցաղային մասը անմիջապես երկրորդ մուտքով կապված է հավաքակայանի տարածքի հետ, որտեղ տեղակայված են լվացարաններ, զուգարաններ: Այս մոտքի վերջնամասում տեղակայված է 50հոգու համար ճաշասրահ, իր խոհանոցային անհրաժեշտ պարագաներով, սառնարանով, լվացարանով, թեյնիկով, միկրոալիքային վառարանով::

Վարչական շենքի առաջին հարկի գլխավոր մուտքը կազմակերպված է տարածքի գլխավոր մուտքի մոտ: Նույն մուտքի մոտ տեղակայված են երկրորդ հարկ բարձրացող աստիճանավանդակը, էլեկտրավահանակային սենյակը:

Երկրորդ հարկում նախատեսված են վարչական նշանակության սենյակներ, ընդհանուր օգտագործման զուգարաններ, պահակի սենյակ:

Էներգախնայողության նպատակով, պատերը և տանիքը ջերմամեկուսացված են բարձր ջերմադիմադրողականությամբ նյութերով:

Բոլոր մուտքերի և նկուղ տանող աստաիճանների վրա նախատեսված են անձրևապաշտպան հովարներ:

Տարածքը ասֆալտապատ է: Անձրևաջրերի ուղղությունը ուղղված է դեպի սպասարկող կից ճանապարհ, որի հեռացման համակարգի վրա տեղադրված է ջրի մաքրման սարքեր:

Վարչական շենքի կոնստրուկցիան ե/բետոնյա կարկաս է, ամրանավորված ինքնակրող պեմզաբլոկե 200մմ բլոկներով: Արտաքինից պատերը երեսապատված են ջերմամեկուսիչ սալերով և ամրանավորված եղանակով, տուֆե սալերով; Տանիքը ձեղնահարկով, փայտյա կոնստրուկցիաներով, ծածկված մետաղական կղմինդրով: Երկրորդ հարկի ծածկում նախատեսված է տանիք բարձրանալու դռան բացվածք:

Բոքսերը նախատեսված է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով, միջնորմները 200մմ հաստությամբ, 2,5մ բարձրությամբ, ամրանավորված բլոկներով, ծածկը տրամատավոր տանիքի թիթեղով:

Ձախակողմյան մասում տեղակայված եռակցման արտադրամասի բոքսի դարպասը տեղաշարժվող է հորիզոնական հարթության նկատմամբ, մյուս դարպասներ նախատեսվում է իրականացնել ինքնաղեկավարվող, շերտավարագույրի փաթեթով: Ձմեռվա պայմանների համար, լիարժեք լուսավորության համար, դռների վերնամասում նախատեսված է չբացվող մետաղապլաստե պատուհաններ:

Գլխավոր մուտքի դարպասը մետաղական է, նախատեսվում է իրականացնել երկու

փեղքով ուղղաձիգ ուղղությամբ բացվող:

Գլխավոր մուտքի մոտ, նախատեսված է սակավաշարժ անձանց համար թեքահարթակ, առաջին հարկում աշխատասենյակ, զուգարան:

Տանիքի ջրահեռացումը կազմակերպված է, ջրատար խողովակներով, ջրհորդանով:

0,00 նիշը համապատասխանում է 731,90մ բացարձակ նիշին:

Ըստ երկրաբանական ուսումնասիրության պայմանների հատկացված տարածքի վերին շերտը համարվում է հողաբուսաշերտ կավավազի լցոնով: Չնայած, որ մաքուր բուսահողը բացակայում է վերին հողաբուսաշերտը կավավազի լցոնով նախատեսված է մինչ շինարարությունը սկսել շերտի հանելով և տեղափոխել համապատասխան վայր, նոր կատարել հողային աշխատանքներ:

Համաձայն «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՋՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացության՝
Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի: Հանդիսանում է լավ ջրաթափանց եւ ջրանցիկ գոտի: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Ողջի գետը: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Տեղամասում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել եւ ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 10 մետրից խորը հորիզոններում:

Հարկ է նշել, որ անձրևաջրերը տարածքներից հեռանում են կազմակերպված:
Կանաչապատ մակերեսների ոռոգումը, կատարվում է ջրցան մեքենաների միջոցով, որոնք օգտվելու են Կապան համայնքի հրշեջ կայանի ջրի աղբյուրից:

Տարածքի տեխնիկատնտեսականական ցուցանիշներ

| | Հավաքակայան | Մակերես քմ | Լվացման կայան | Մակերես քմ |
|---|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր մակերես (գործարանային 36/1 և 36/2) | 4919,9մ | Ընդհանու մակերես (գործարանային 36/3 | 830,0 |
| 2 | Կառուցապատման մակերես<br>- Բոքսեր<br>- Շվաքարաններ<br>-Վարչական մսանաշենք<br>**Ընդեմենը** | <br>1290,0<br>1178,9<br>345,6<br>**2814,5**<br>**/57,2%/** | Կառուցապատման մակերես, սալվածքով | **266,2**<br>**/32,6%/** |
| 3 | Ճանապարհների մակերես սալվածքով | **2105,4**<br>**/42,8%/** | Ճանապարհների մակերես | **222,7**<br>**/26,3%/** |
| 4 | | | Կանաչապատ մակերես | **341,1**<br>**/41,1%/** |
| | 2(2814,5)+3 | 100% | 2+3+4 | 100% |

Ստորև ներկայացվում է տարածքի գլխավոր հատակագիծը՝




Տարածքների անվանացանկ

| N սենք | Անվանում | Մակերես մ² | |
|---|---|---|---|
| 1 | Վարչական շենք 2 հարկ | 210 | |
| 2 | Ծվաքարան, մեքենա կայանատեղիներ | 703 | |
| 3 | Յուղերի պահեստ | 96 | |
| 4 | Տեխնիկական սպասարկման տարածք | 144.0 | |
| 5 | Խառատային արհեստանոց | 72 | |
| 6 | Եռակցման արհեստանոց | 257 | |
| 7 | Սպասարկման տարածք | 60,0 | |
| 8 | Սպասարկման տարածք | 60,0 | |
| 9 | Էլեկտրի արհեստանոց, մարտկոցի նորոգում | 60,0 | |
| 10 | Անվադողերի նորոգման արհեստանոց | 60,0 | |
| 11 | Անվադողերի պահեստ | 60,0 | |
| 12 | Արի պահեստ | 60,0 | |
| 13 | Պահեստ | 60,0 | |
| 14 | Ծվաքարան, մեքենա կայանատեղիներ | 400.0 | |

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Կապանի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ կանաչապատման նախագծի համաձայն:

Նշենք, որ կանաչապատ տարածքի ջրելու համար օգտագործվում են ջրցան մեքենաներ, որը մատակարարվում է Կապանի հրշեջ կայանից:

Ստորև ներկայացվում է տարածքի գլխավոր հատակագիծ
Շինարարական աշխատանքների կազմակերպում



# Վարչական մասնաշենք

## Նկուղային -թաքստոցի հարկի հատակագիծ




### Սենյակների անվանացանկ նկուղային հարկ

| N սենք | Անվանում | Մակերես մ² | Սենքի կարգը |
|---|---|---|---|
| 1 | Նախամուտքեր (2 հատ) | 3.5 | |
| 2 | Թաքստոց | 226.0 | - |
| 3 | Օդափոխության խուց | 8.2 | - |
| 4 | Պահեստ | 3.5 | - |
| 5 | Դիզել-գեներատոր | 14.5 | - |
| 6 | Պահուստային ջրի բաքեր | 9.3 | |
| 7 | Զուգարաններ (2 հատ) | 6.5 | |

Ծանոթություն

| Փոփ | Քանակ | Թերթ | Nփաս | Ստոր | Ամս. | ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԵՑ | | ԱՎԵՏԻՍՅԱՆ | | | | Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | | | | ԱՆ | 1 | 8 |
| | | | | | | Վարչական մասնաշենք Նկուղային-թաքստոցի հատակագիծ | «ՍԹԵՄ» ՍՊԸ ԼԻՑԵՆԶԻԱ 17204 | stem architects | |

## Առաջին հարկի հատակագիծ

Այլումինե բազրիք -2, L=7.2մ




### Սենյակների անվանացանկ 1 հարկ

| N սենք | Անվանում | Մակերես մ² | Սենքի կարգը |
|---|---|---|---|
| 1 | Նախամուտք | 6.9 | |
| 2 | Միջանցք | 32.7 | |
| 3 | Աշխատասենյակ հաշմանդամի համար | 9.4 | |
| 4 | Ճաշասենյակ խոհանոցային խորշով | 103.2 | |
| 5 | Միջանցք դեպի դուրս | 8.5 | |
| 6 | Լոգարան | 4.9 | |
| 7 | Հաշմանդամի զուգարան | 3.5 | |
| 8 | Զուգարաններ (4 հատ), Նախամուտք | 9.1 | |
| 9 | Աստիճանավանդակ | 15.8 | |
| 10 | Հանդերձարան | 38.5 | |
| 11 | Տեխնիկական նշանակության սենյակ | 11.9 | |
| 12 | Վարչական սենյակ | 11.0 | |
| 13 | Վարչական սենյակ | 10.1 | |
| 14 | Էլ. վահանակային | 3.8 | |

| Փոփ | Քանակ | Թերթ | Nփաս | Ստոր | Ամս. | ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԵՑ | | ԱՎԵՏԻՍՅԱՆ | | | | Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | | | | ԱՆ | 2 | 8 |
| | | | | | | Վարչական մասնաշենք Առաջին հարկի հատակագիծ | «ՍԹԵՄ» ՍՊԸ ԼԻՑԵՆԶԻԱ 17204 | stem architects | |

## Երկրորդ հարկի հատակագիծ




### Սենյակների անվանացանկ 2 հարկ

| N սենք | Անվանում | Մակերես մ² | Սենքի տեսակ |
|---|---|---|---|
| 1 | Միջանցք | 46,2 | |
| 2 | Պահակ | 11,1 | - |
| 3-6 | Աշխատասենյակներ | 73,8 | - |
| 7 | Զուգարաններ (2 հատ) | 4.5 | - |
| 8-13 | Աշխատասենյակներ | 117,5 | - |
| 14 | Աստիճանավանդակ | 17.0 | |
| 15 | Բաց պատշգամբ | 2,2 | |

Ծանոթություն

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք | | | |
| Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան | Փուլ: ԱՆ | Թերթ: 3 | Թերթեր: 8 |
| Վարչական մասնաշենք Երկրորդ հարկի հատակագիծ | «ՍԹԵՄ» ՍՊԸ ԼԻՑԵՆԶԻԱ 17204 | stem architects | |

Փոփ | Քանակ | Թերթ | Nփաս | Ստոր | Ամս.

ՆԱԽԱԳԾՈՂ Ս.ՍԵՏԻՍՅԱՆ

## Ճակատ ըստ «1-5» առանցքների




| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք | | | |
| Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան | Փուլ: ԱՆ | Թերթ: 4 | Թերթեր: 8 |
| Վարչական մասնաշենք Ճակատ ըստ «1-4» առանցքների | «ՍԹԵՄ» ՍՊԸ ԼԻՑԵՆԶԻԱ 17204 | stem architects | |

Փոփ | Քանակ | Թերթ | Nփաս | Ստոր | Ամս.

ՆԱԽԱԳԾՈՂ Ս.ՍԵՏԻՍՅԱՆ



Ճակատ ըստ «Ա-Գ» առանցքների
Ճակատ ըստ «Գ-Ա» առանցքների
Մետաղական կղմինդր
Տուֆե սալիկ 40մմ
Բազալտյա սալիկ 40մմ
Հովար-1
Հովար-4
+6,000
+2,700
0,000
-0,600
-0,900
-3,300
12000
Ե/բետոնյա պատ
Ջերմամեկուսիչ 38-47կգ/մ3
խտությամբ 2400x600x60մմ
սալերով - 60մմ
(ПЕНОПЛЭКС 45 Пенополистирол
экструдированный,)
մետաղական ցանցով 30մմ
Ջրամեկուսիչ 2 շերտ հղոցամ
մետաղական ցանցով 100x100x3մմ
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք
Փոփ
Քանակ
Թերթ
Ν փաս
Ստորր
Ամս.
ՆԱԽԱԳԾԵՑ
ԱՎԵՏԻՍՅԱՆ
Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան
Փուլ
Թերթ
Թերթեր
ԱՆ
5
8
Վարչական մասնաշենք
Ճակատ ըստ «Ա-Գ», «Գ-Ա» առանցքների
«ՍԹԵՄ» ՍՊԸ
ԼԻՑԵՆԶԻԱ 17204
stem architects




Ճակատ ըստ «5-1» առանցքների
Մետաղական կղմինդր
Տուֆե սալիկ 40մմ
Հովար-3
Հովար-2
Ալյումինե բազրիք
+7,300
+6,000
+4,200
+2,700
0,000
-3,300
2500
5100
3600
400
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք
Փոփ
Քանակ
Թերթ
Ν փաս
Ստորր
Ամս.
ՆԱԽԱԳԾԵՑ
ԱՎԵՏԻՍՅԱՆ
Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան
Փուլ
Թերթ
Թերթեր
ԱՆ
6
8
Վարչական մասնաշենք
Ճակատ ըստ «4-1» առանցքների
«ՍԹԵՄ» ՍՊԸ
ԼԻՑԵՆԶԻԱ 17204
stem architects




Բոքսերի և շվաքարանների գլխավոր հատակագիծ



# Շվաքարաններ, բոքսեր







Թ. 3,4,5,6 բոքսերի ճակատ
Մետաղական թիթեղ 2մմ
Թ. 2 շվաքարաններ
Թ. 3,4,5,6 բոքսերի կտրվածք 1-1
Մետաղական խողովակ 200x200մմ
Ծանոթություն
Նիշերը, ունեն կողմնորոշիչ բնույթ, ճշգրտման ենթակա են
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք
Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան
Թ. 3,4,5,6 բոքսերի ճակատ
stem architects


Թ. 6 բոքսի հատակագիծ
Թ. 6 բոքսի հատակագիծ Մ1:500
Բոքսեր N7-13
Ծանոթություն
Նիշերը, ունեն կողմնորոշիչ բնույթ, ճշգրտման ենթակա են
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք
Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան
Թ. 6 բոքսի հատակագիծ կտրվածք 1-1
stem architects

## Լվացման կայան




**Ծանոթություն**

Նիշերը, ունեն կողմնորոշիչ բնույթ, ճշգրտման ենթակա են

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| | | | | | | ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք | | | |
| Փոփ | Քանակ | Թերթ | Nփաստ | Ստոր | Ամս. | | | | |
| | | | | | | Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան | Փուլ | Թերթ | Թերթեր |
| ՆԱԽԱԳԾԵՑ | | ԱՎԵՏԻՍՅԱՆ | | | | | ԱՆ | 7 | 8 |
| | | | | | | Թ. 6 բոքսի կտրվածք 1-1 | «ՍԹԵՄ» ՍՊԸ ԼԻՑԵՆԶԻԱ 17204 | stem architects | |

## Թ. 7-13 բոքսերի հատակագիծ Մ1:500




## Թ. 7-13 բոքսերի ճակատ




## Թ. 7-13 բոքսերի կտրվածք




**Ծանոթություն**

Նիշերը, ունեն կողմնորոշիչ բնույթ, ճշգրտման ենթակա են

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| | | | | | | ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք | | | |
| Փոփ | Քանակ | Թերթ | Nփաստ | Ստոր | Ամս. | | | | |
| | | | | | | Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայան | Փուլ | Թերթ | Թերթեր |
| ՆԱԽԱԳԾԵՑ | | ԱՎԵՏԻՍՅԱՆ | | | | | ԱՆ | 8 | 8 |
| | | | | | | Գլխավոր հատակագիծ, կտրվածք 1-1 | «ՍԹԵՄ» ՍՊԸ ԼԻՑԵՆԶԻԱ 17204 | stem architects | |

## Էլեկտրատեխնիկական մաս

Նախագիծը կատարված է համաձայն գլխավոր ճարտարապետի առաջադրանքի, հարակից բաժիններից (օդափոխություն,ջերմամատակարարում) ստացված տվյալների: Նախագծային լուծումները համապատասխանում են գործող նորմատիվային փաստաթղթերին - ПУЭ-издание 6,7; СП-31-110-2003-Проектирование и монтаж электроустановок жилых и общественных здзний; СП52.13330.2011-Естественное и искусственное освещение-Актуализированная редакция СНиП 23-05-95; ՀՀՇՆ 22-03-2017-Արհեստական և բնական լուսավորում :

### Բաշխիչ ցանց

Շենքի էլեկտրամատակարարման սհեման մշակված է հետևյալ սկզբունքով: 1 հարկի էլեկտրավահանայինում մոնտաժվում է ВРУ տեսակի սարք(MDB), որը կոպլեկտավորվում է

մուտքային անջատիչ-բաժանիչներով,ավտոմատ անջատիչով և ֆիդերային ավտոմատ անջատիչներով: ВРУ-ից ռադիալ գծերով կատարվում է շենքի հարկերում նախատեսված խմբային վահանակների էլեկտրասնուցումը:Բացի այդ,անմիջապես ВРУ-ից կոմպլեկտ արկղերի միջոցով միացվում են 1-ին հարկի 3 օդափոխության սարք- ՆՀ1(3+22.5կՎտ),ՆՀ2(0.3+9կՎտ) և ԱՀ1(1կՎտ):Նշված սարքերի կոմպլեկտ ղեկավարման արկղերը տեղադրվում են էլեկտրավահանայինում:

Շենքի ներսում տեղադրման են ենթակա թվով 3 հատ խմբային վահանակներ՝

P1-նկուղային հարկում

P2- 1 հարկում (էլեկտրավահանայինում)

P3- 2 հարկում

Եվս 3 խմբային վահանակ նախատեսվում են տարածքում՝

P10-էլեկտրկի արհեստանոցում

P11-եռակցման արհեստանոցում

P12-մեքենա լվացման կայանում

Տարածքի վահանակների միացումը օբյեկտի ընդհանուր ցանցին կատարվում է հետևյալ սխեմայով՝

Հիմնական շենքի MDB գլխավոր վահանից սնող գծերը բարձրացվում են 2-րդ հարկ,այստեղից արտաքին պատերին ամրացված խողովակականգնակների միջոցով մալուխները օդային եղանակով անցակվում են մինչև մոտակա արհեստանոցների

պատերը, այնուհետև պատերով անցնում են դեպի խմբային վահանակներ:

Մնող մալուխների տվյալները ամփոփված են մալուխային մատյանում:

Օբյեկտի հաշվարկային հզորությունն 100կՎԱ:

**Խմբային ցանց**

Հարկային վահանակներից խմբային ցանցերի անցկացման համար 1 և 2 հարկերի միջանցքների երկայնքով նախատեսված են 200x50մմ լարային մալուխատարներ:

Խմբային գծերը նախատեսված են ВВГнг-LS մալուխներով,անցկացրած՝

-բաց բոկակների տակ նկուղային հարկում

-մալուխատարներով 1 և 2 հարկերի միջանցքներում

-տաքնված սվաղի շերտի տակ 1 և 2 հարկերի սենյակներում (ВВГнг-LS մալուխի տափակ տեսակի օգտագործումով)

Խմբային գծերին միացված են միաբնույթ կամ խառը տեսակի սպառիչներ-լուսավորություն, ընդհանուր նշանակության վարդակներ, հատակային էլեկտրական կոնվեկտորների վարդակներ,անմիջապես միացվող առաստաղային կոնվեկտորներ, օդամուղներ:

Վերջինների գծերը առանձնացված են- ձեղնահարկում նախատեսված օդամուղները ղեկավարվում են մեկստեղնավոր անջատիչներով, տեղադրված տվյալ օդամուղի կողմից սպասարկող վայրերում:

Ընդհանուր նշանականության վարդակները սենյակներում նախատեսված են ներսարքված տեսակի և մոնտաժվում են 0.3մ բարրձրության վրա:Հատակային կոնվեկտորների վարդակները - նուն բարձրության վրա, ապահովելով նվազագույն 0.5մ հեռավորությունը տաքացնող սարքից:Լուսավորության անջատիչները մոնտաժման են ենթակա 0.9մ բարձրության վրա:

Որպես լույսի աղբյուր կիրարված են տարբեր տեսակի լուսադիոդային լուսատուներ-հիմնականում 30Վտ հզորության գծային (1150x150մմ) և քառակուսի (595x595մմ)-1 և 2 հարկերում: Լուսավորության ղեկավարումը կատարվում է՝

-սենյակներում-անջատիչներով

-2 մուտք ունեցող սենքերում-անցումային անջատիչներով(reverse)միջանցքային սխեմայով

-սանդուղքում -շարժման տվիչներով

-արտաքին մուտքերում-ֆոտոռելեյով

Որպես էվակուացիոն լուսավորության լուսատուներ կիրարված են ներսարքված մարտկոցով 4վտ հզորության պատի լուսատուներ:

Տարածքի լուսավորության ղեկավարումը կատարվում է ֆոտոռելեյից, միացված էլեկտրիկի արհեստանոցի P10 վահանակից:

Հողանցման համակարգ և շանթապաշտպանություն

Կիրարված է TN-C-S պաշտպանիչ համակարգը - սնող մալուխի PEN ջիղը բաժանումը PE և N ձողերի միջև կատարվում է MDB-ի մեջ, որտեղից սկսած նշված ջղերը պետք է մեկուսացված լինեն մեկը մյուսից ներքին ցանցի ցանկացած կետում: Նախատեսված է կրկնակի հողանցման օջաղ, որի դիմադրությունը չի նորմավորվում, համաձայն ПУЭ 1.7.61:

Որպես կրկնակի հողանցման օջաղ և միաժամանակ պոտենցիալների հավասարեցման մագիստրալ կիրարված է 50x5մմ շերտավոր պողպատ, անցկացրած MDB գլխավոր վահանից: Մագիստրալը միացնում է կոնստրուկտիվ չկապված արհեստանոցները և ծարայում է նաև որպես շանթարգելման հողանցիչ:

Բացի այդ գլխավոր հատակագծի վրա նշված կետերում կառուցվում են լրացուցիչ հողանցման օջախներ(թերթ E-04):

Էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ավտոկայանատեղիները ևս ապահովված են հակահրդեհային համակարգերով' ծխահեռացման և հրդեհաշիջման համակարգերով:

Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայանի նախագծի ջրամատակարարման և ջրահեռացման մասը իրականացված է, հիմք ունենալով.

- գլխավոր հատակագիծը և ճարտարապետա-շինարարական գծագրերը.

- տեղանքի տոպոգրաֆիական հանույթը.

- տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները.

- ՀՀ տարածքում գործող շինարարական նորմաներն ու պահանջները՝

- ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում»

- ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում, արտաքին ցանցեր և շինություններ»

- ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ»

Նախագծվում են ջրամատակարարման և ջրահեռացման հետևյալ համակարգերը.

- խմելու տնտեսական-հակահրդեհային ջրամատակարարման համակարգ

- կենցաղային և արտադրական կեղտաջրերի համակարգեր

- մեքենաների լվացման ջրերի հեռացման և մաքրման համակարգ:

## ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս համակարգը նախատեսված է վարչական մասնաշենքին և մեքենաների լվացման կայանին սառը ջուր մատակարարելու, ինչպես նաև մեքենաների սպասարկման բոքսերի հակահրդեհային կարիքների համար: Մեքենաների լվացումը իրականացվում է կարչերներով, համահոս եղանակով:

Ջրմուղի ներքին ցանցը մոնտաժվում է պոլիպրոպիլենային, իսկ հակահրդեհային համակարգը՝ պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից: Մայրուղի գծերը անցնում են առաջին հարկի առաստաղով և ջերմամեկուսացվում ռետինե ջերմամեկուսիչ շերտով:

Խմելու ջրի աղբյուրը իրականանալու է Վեոլիա ջրի տեխնիկական պայմանի համաձայն ստորև կցվում է:

Արտաքին հրդեհամարումը իրականացվում է գործող ջրագծի վրա տեղադրված հրշեջ հիդրանտով:

Արտաքին հրդեհամարման ելքը 20.0լ/վրկ է: Ջրամատակարարման ներտարածքային ցանցը իրականացված է պոլիէթիլենային բարձր խտության (HDPE) տիպի խողովակներից P=1.0Mpa, համաձայն գործող չափորոշիչների:

Ջրագծերի տեղադրման խորությունը որոշվում է գրունտի սառեցման պայմանից, ապահովելով նաև խողովակների՝ մեխանիկական ուժերից չվնասվելու պայմանը՝ ունենալ խողովակի վրա 1.0մ հողի շերտ: Ետլիցքը խողովակների վրա 0.2մ շերտով իրականացնել ավազային գրունտով, խողովակների տակ ապահովել 10սմ ավազի նախապատրաստական շերտ:

## ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂԻ

Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս հեռանում են բակային ցանց, որը միանում է գործող կոյուղատարին, համաձայն տեխնիկական պալմանի:

Կոյուղու ներտարածքային ցանցը իրականցված է պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից ռետինե սեղմիչ օղակներով: Խողովակների պտտման անկյուններում, թեքությունների փոփոխման տեղերում, ուղղագիծ հատվածների յուրաքանչյուր 50 մ-ը մեկ տեղադրված են կոյուղու կլոր ե/բ հորեր:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՅՈՒՂԻ

Հատակների և մեքենամասերի լվացման կեղտաջրերը լցվում են հատակի վրա նախատեսված կիսախողովակ առվակների մեջ, որտեղից լցվում ջրընդունիչ կոնքեր մեխանիկական մաքրման համար, յուղերից և բենզինից մաքրվում բենզորսիչում և բակային ցանցով հեռանում են դեպի կոյուղի, համաձայն տրված տեխնիկական պայմանի:

Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից ռետինե սեղմիչ օղակներով:

**Առկա է Վեոլիա ջրի տեխնիկական պայմանը՝**

VEOLIA
Ջուր

ՀՀ Սյունիքի մարզ
Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին
/հասցեն՝ ք. Կապան, Չարենցի 1/

«27» 11 2024թ.

N ԱԸ/48368

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Փարսյան,

Ի պատասխան Ձեր 08.11.2024թ. թիվ 07/5400 գրության՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ՎՋ5560/2024 ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի առնվազն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով ներկայացնել ընկերության շահագործման համապատասխան տնօրինություն ք. Երևան, Շիրակի 94 հասցեով:
Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:
Հողային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:
Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևտրային հաշվառքի սարք տեղակայելու և Ձեզ հետ ծմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:
Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետությանն անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
*Առդիր՝ 2 թերթ:*

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Պատասխանատու՝
Լ. Բաբելյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 48368
«27» 11 2024

ՀՀ, ք. Երևան, 0025, Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 0025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: am.water.office.all@veolia.com
Web site: www.veolia.am

02 Տ-7154 .12 24

VEOLIA

«Հաստատում եմ»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա.Մարտիրոսյան
«25» 11 2024թ.

# Տեխնիկական պայման ՎՋ 5560/2024

(Ջրամիացման և/կամ ջրահեռացման նախագծման)

Մ. Սյունիք, ք. Կապան, Գործարանային փող. 36/1 և 36/2 | ՀՀ մ. Սյունիք, Կապան համայնք | 060720074




443945

| Համակարգ | Ջրամատակարարում | Ջրահեռացում | Հրդեհաշիջում |
|---|---|---|---|
| Կոմունիկացիայի գտնվելու վայրը | Տարածքներից մոտ 50մ հեռավորությամբ | Տարածքներից մոտ 200մ հեռավորությամբ | - |
| Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը | d=160մմ, P=6.0մթն. պ/էթ. | d=1000մմ | - |
| Միացման կետը | Տարածքներից մոտ 50մ հեռավորությամբ անցնող ջրագծից | Տարածքներից մոտ 200մ հեռավորությամբ անցնող կոյուղատարին | - |
| Միացման տրամագիծը | Համաձայն նախագծի | | |
| Ջրաչափի տրամագիծը | | | |
| Այլ պահանջներ | 1. Ջրաչափական հանգույցների համար կառուցել դիտահորեր<br>2.Անհրաժեշտ է նախատեսել ճնշման կարգավորիչ փական | Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր | Տես * կետը |
| Ջրամատակարարման գրաֆիկը | Շուրջօրյա | - | - |

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին :Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարաձգման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա։

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀՇՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ թիվ 1025 Ն որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Սույն տեխնիկական պայմանով տրամադրվում է դիմումատուի կողմից ներկայացված ջրապահանջին համապատասխան 2.5լ/վ ջրաքանակ:

Տեխ. պայմանների մասնագետ՝ Մ. Հովհաննիսյան

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ՋՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Մեքենաների լվացումը իրականացվում է համահոս եղանակով, լվացման ջրերը ինքնահոս հեռանում են գործող կոյուղու կոլեկտոր:

ՋԵՌՈՒՑՈՒՄ_

ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում կառուցվող կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայանի ջեռուցման նախագիծը իրականացվում է ըստ ճարտարապետա-հատակագծային լուծումների և պատվիրատուի պահանջների, համաձայն

ՀՀ գործող նորմերի և կանոնակարգերի՝
ՀՀՇՆ 24-01-2016 Շենքերի Ջերմային Պաշտպանություն:
ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և Շինությունների Հրդեհային Անվտանգություն:
ՀՀՇՆ II-7.01-2011 Շինարարական Կլիմայաբանություն:
EN 15251 - ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ - Նախագծի համար ներքին բնապահպանական ներմուտքագրման պարամետրեր:

Որպես ջեռուցման սարքեր ընտրվել են պատին ամրացվող էլեկտրական ռադիատորներ, էլեկտրատաքացուցչի աշխատանքային ռեժիմի 12-աստիճան կարգավորիչով (օրինակ "NUIROT"):

## ՏԱՔ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Շենքերում կենցաղային տաք ջուրը պատրաստվում է նկուղային հարկում տեղադրված 500լ ծավալով կուտակային ջրատաքացուցիչ բաքից: Ջրատաքացուցչի համար որպես ջերմության աղբյուր է ծառայում 48կՎտ հզորությամբ մեկ կոնտուրանի էլեկտրական կաթսան, որի +80 +70 C պարամետրերով ջուրը Q=3.2մ3//ժ; H=2.5մ շրջանառու պոմպով մղվում է ջրատաքացուցչի առաջնային կոնտուրի մեջ: Ջրմուղի ցանցից սնվող ջրատաքացուցիչում կուտակված տաք ջուրը խառնվում է սառը ջրին և արդյունքում ստացված 45 C կենցաղային տաք ջուրը քաղ. ցանցի ճնրման տակ մղվում է դեպի սպառիչ սարքեր:

## ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Նախագծով նախատեսվում է հեռախոսային, համակարգչային ցանցերի մոնտաժման աշխատանքներ:

Արտաքին հեռախոսային մալուխի նախագիծը տվյալ նախագծով չի դիտարկվում:

Ներքին հեռասոսակապն ապահովելու համար նախատեսվում է Pasnasonic մակնիշի KXTEB 308 RU ԱՀԿ:

Համակարգիչների սնուցման իրականացվում է ՍԵՐՎԵՐ-ից:

Հեռասոսների-համակարգիչների լարանցումը կատարվոմ է UTP տեսակի հաղորդալալերով:

կապի ցանցերը նախատեսվում են PVS խողովակների մեջ-մալուխի սակառի տակ:

Կապի ցանցերի վարդակները տեղադրվում են հատակից 0,4մ բարձրության վրա:

**Գազամատակարարում չի նախատեսվում:**

**Աղբահեռացում.** Շինարարության և Շահագործման փուլերում աղբահեռացումը կատարվելու է Կապանի համայնքապետարանի հետ կնքվելիք պայմանագրի համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Տեղադրվելու են 6 հատ 1*1,5 չափերի աղբի տեսակավորման աղբամաններ:

Աղբը նախատեսվում է տեղափոխել Կապանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր տեղափոխել՝ համաձայն կնքվելիք պայմանագրի:

**Բարեկարգում և կանաչապատում.** Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել՝ համաձայնեցված Կապանի քաղաքապետարանի հետ՝ տարածաշրջանին բնորոշ բուսատեսակներով և

ծառատեսակներով:

**Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց**

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

**Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր ցանկ՝**

- էքսկավատոր շերեփի տարողությունը 0.4մ$^3$ – 1.0 մ$^3$ – 1 հատ;
- բուլդոզեր հզորությունը 96կՎտ - 1 հատ;
- ավտոինքնաթափ բեռնատվությունը10տ – 1 հատ;
- ավտոինքնաթափ բեռնատվությունը 20տ – 1 հատ;
- ավտոինքնաթափ կողային բեռնատվությունը 14տ – 1 հատ;
- ֆերմատար L= 13մ - 1 հատ;
- ավտոամբարձիչ բեռնատվությունը 25տ – 1 հատ;
- ավտոաշտարակ բեռնունակությունը 500կգ – 1;
- ամբարձիչով բեռնատար մեքենա (манипулятор) – 1;
- բեռնիչ ճակատային բեռնատվությունը 3տ – 1 հատ;
- բետոնապոմպ – 1 հատ;
- բետոն տեղափոխող մեքենա – 1 հատ;
- ձեռքի տոփան – 1;
- եռակցման սարք – 1;
- ՇԷԿ (շարժական էլեկտրակայան) – 1 հատ:

Այս ցանկը և քանակը վերջնական որոշվում է շինարարության ընթացքում աշխատանքների կատարման նախագծում (ППР):

Շինմոնտաժային աշխատանքներից առաջացած շինարարական աղբը ժամանակավոր կուտակվում է դրա համար հատկացրած տարածքում /համայնքապետարանի կողմից հատկացված/, որտեղից բարձվում է ինքնաթափ և հեռացվում շինհրապարակից: Պարտադիր պայման է՝ աղբակույտի կարճաժամկետ կուտակում:

Շինարարական և կենցաղային աղբը հեռացվում է 7,2կմ հեռավորության վրա:

Շինհրապարակում տեղադրված զուգարանը նախատեսվում է սեպտիկ հորով, որը ժամանակ առ ժամանակ մաքրվում է ասինիզացիոն մեքենայով և հեռացվում շինհրապարակից մոտակա կոյուղատար:

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային կեղտաջրերը հեռացվում են ցիստեռներով (կեղտաջրերը պոմպով տեղափոխվում են ցիստեռն) և հեռացվում շինհրապարակից մոտակա կոյուղատար:

Կապալառու կազմակերպությունը պետք է կնքի պայմանագրեր բոլոր այն կազմակերպությունների հետ, որոնք իրականացնելու են վերոհիշյալ աշխատանքները, ապահովելով շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Համաձայն շինաշխատանքների հատակագծի շինարարական մեքենաները կայանվելու են հողատարածքի հյուսիսային կողմում): Մեքենաների անվադողերի լվացման վայրը նախատեսված է շինհրապարակի մուտքային և ելքային կետերում:

Նախատեսվում է շինաշխատանքներից առաջացած բետոնաջրերը և կեղտաջրերը **հավաքել** ժամանակավոր հորում տեղադրված կեղտաջրերի հեռացման տարայում (≤5 մ$^3$): Տարայում հետերոգեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոգեն զանգվածը՝ որպես շին աղբը տեղափոխել աղբավայր:

Նախատեսվում է 2 մուտք դեպի շինհրապարակ:

### 1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով'

էքսկավատորով, դժվար հասանելի մասերում' ձեռքով:

Հանված գրունտը կարճաժամկետ կպահվի շինհրապարակում հետո կօգտագործվի ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը'անմիջապես բարձում են ավտոինքնաթափերը և տեղափոխվում Կապան քաղաքի կողմից հատկացված վայր:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով, հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել գլդոնով խորանարդային գրտնակով կամ տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում' ձեռքի տոփանիչներով:

### 1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

### 1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Կապան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ

սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աշխատանքների բնույթից ելնելով բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի« կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներովª գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության

վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

### 1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 51 մարդ, որից

Ինժեներատեխնիկական անձնակազմ - 6 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

### 1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

WË.ï. = (n x N + $n_1$ x $N_1$) x T, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 6 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ$^3$օր/մարդ

n$_1$– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 42 մարդ

N$_1$ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1040 օր

Wխ.տ.= (26 x 0.016 + 42x 0.025) x 10400 = 1524.64 խմ/շին. ժամ.:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

Մ1 = S$_1$ x K$_1$ x T x D, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը, 2000 քմ,

K$_1$ – 1 քմ օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1080

D – Ջրցանման քանակը օրվա ընթացքում – 2

Մ1 = 2000 x 0.0015 x 1080 x 2 = 6480 խմ/շին.

ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 8004.64 խմ/շին. ժամ:

Կայանատեղիի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի Կապանի հրշեջ կայանից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (նշված գործընթացը հնարավոր կլինի կազմակերպել շինարարության թույլտվության ստացումից հետո):

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

Օդային ավազան.

Շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

Շինարարական աշխատանքներ ժամանակացույց Աղյուսակ-1



Շինարարական աշխատանքներ ժամանակացույց Աղյուսակ-2




## ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6)/3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

$P_1$ - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

$P_2$ – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

$P_3$ - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

$P_4$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով նաև ջրցանը)

$P_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4 $P_6$

- գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հանվող գրունտի և հողի քանակը՝ 23197մ$^3$ ամբողջ շինարակության ընթացքում, կամ 37115,2 տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 36 ամիս, որից հողային աշխատանքները՝ 4 ամիս, կամ 120 օր:

G = 37115,2 տ : 120 օր : 8 ժամ/օր = 38,7 տ/ժամ:

Q1 = (0.05 x 0.02 x 1.0 x 0.4 x 0.4 x 38,7 x 10$^6$ x 0.5 x 1.0)/3 600= 0.86 գ /վրկ:

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

0.86 գ/վրկ x 120 օր x 8 ժամ x 3 600վրկ/ժամ : 1 000 000 գ/տ = 2,97 տ:

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացում:

<u>Վառելանյութի օգտագործումը</u>

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 80-90լ/օր սահմաններում, ամբողջ շինարարության ընթացքում վառելիքի հաշվարկային ծախսը կկազմի 10800 լ կամ 9,18 տ:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք: Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

<u>բ) Դիզելային վառելիքի այրման արգասիքները</u>

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար

արտանետումները բերված են ստորև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

| Վառելիքի տեսակը | Նյութի անվանումը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | $NO_x$ | CH | ՑՕՄ | CO | $N_2O$ | $CO_2$ | ՊՄ |
| Դիզելային վառելիք | 42.3 | 0.243 | 8.16 | 36.4 | 0.122 | 3138 | 4.3 |

Հաշվի առնելով, որ տարածքում աշխատելու են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 18-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 18: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

| Ավտոմեքենայի կատեգորիան | Վնասակար նյութը | Տեսակարար արտանետումներր, գ/կգ | Արտանետումները, տ/շին.ժամ |
|---|---|---|---|
| Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ | CO | 36.4 | 2.53 |
| | Ածխաջրածիններ | 8.403 | 0.58 |
| | $NO_x$ | 42.422 | 2.95 |
| | Մուր | 4.3 | 0.3 |

<u>Ծծմբային անհիդրիդ</u>

Ծծմբային անհիդրիդի (SO2) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է $SO^2$-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2\Sigma k_s b$, որտեղ՝
ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ
b –ն վառելիքի ծախսն է՝ 9,18 տ/շին.ժամանակ:
$SO_2$ = 2 x9,18 x 0.002 = 0.037 տ:

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19: Շինարարության փուլի արտանետոմներր

| N | Արտանետվող նյութի անվանումը | Արտանետումը, տ/շին.ժամ |
|---|---|---|
| 1 | Անօրգանական փոշի | 2,97 |
| 2 | Ածխածնի օքսիդ | 2.53 |
| 3 | Ածխաջրածաններ | 0.58 |
| 4 | Ազոտի երկօքսիդ | 2.95 |
| 5 | Մուր | 0.3 |
| 6 | Ծծմբային անհիդրիդ | 0,037 |

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կստուգվեն և շարժիչները կկարգաբերվեն:

1.1.1. Ջրային ավազան

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվեն շարժական բիոզուգարաններ՝ լվացարանով: Բիոզուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների խմելու նպատակների համար: Քանի որ տեղում կենցաղային հարմարություններ չեն նախատեսվում, աշխատողների կացությունը կազմակերպվելու է հարակից համայնքներում, յուրաքանչյուր օր անձնակազմը վերադառնալու է կացության վայր, որտեղ էլ կապահովվի բոլոր անհրաժեշտ սանիտարա-հիգիենիկ պայմանները:

1.1.2. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/ /ծածակագիրը՝ 9120040001004/, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափողվի համայնքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայր:

Որպես շինարարական աղբի կառաջանա

Հողային հանվածքներ – ծածկագիր 3140110101005

Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկ – ծածկագիր 3990120001004,

Շինարարության փայտանյութի թափոններ, ծածկագիր 1720200099005,

Չաղտոտված պողպատե մետաղամնացուկներ, ծածկագիր 3512011801995:

Ըստ առաջացման կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի

մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ տարածքում չեն առաջանա: Այնուամենայնիվ, ֆորս–մաժորային իրավիճակներում հնարավոր արտահոսքերից խուսափելու համար բոլոր տեսակի յուղերը և քսայուղերը (կոմպրեսորային յուղ, արդյունաբերական յուղ և այլն) հավաքվելու և պահպանվելու են գործունեության տարածքում առանձնացված փակ սենյակում և տրամադրվելու են լիցենզավորված կազմակերպության՝ հետագա միջոցառումների իրականացման համար: Տեղափոխությունը ևս կիրականացվի լիցենզավորված կազմակերպության կողմից:

Կարևոր է նաև հաշվի առնել, որ տարածքում առկա են որոշ նյութեր, որոնք գործունեության իրականացման ընթացքում պետք է հեռացվեն տարածքից: Այդ նյութերը կհավաքվեն համապատասխան վայրում և կտեղափոխվեն համայնքի կողմից տրամադրված վայր՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան: Այն նյութերը, որոնք պիտանի են օգտագործման, կտրամադրվեն ՀՀ Պետական Գույքի Կոմիտեին:

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### 2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Ադրբեջանին: ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը(Արաքսի հովիտ 380մ):
Կապան քաղաքը գտնվում է Հայաստանի հարավ-արևելյան մասում, Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին, Ողջի գետի հովտում, ծովի մակարդակից 750-1050 մետր բարձրության վրա, Երևանից 320 կմ, իսկ Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ 80 կմ հեռավորության վրա: Քաղաքն արևելքից արևմուտք ձգվում է 13 կմ:

*Շրջանի երկրաբանական պայմանները*

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքին մասնակցում են չորրորդական հասակի ապարներ,որոնք գտնվում են խորը հորիզոններում:Այս ապարների արտաքին շերտերը ծածկված են Դելյուվիալ-պրոլյուվիալ,էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներով՝ ներկայացված կավային գրունտներով:

***Գեոմորֆոլոգիական տեսակետից***. Հետազոտվող տարածքը գտնվում է երկրի հարավ-արեւելքում, Երեւանից 320 կմ հարավ-արեւելք, Ողջի գետի ափին, Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին, հարավից եւ հյուսիսից շրջափակված է Մեղրու եւ Բարգուշատի լեռներով՝ ծովի մակարդակից 910 մ բարձրության վրա:
Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը:

Կլիման բարեխառն լեռնային է՝ մեղմ ձյունապատ ձմեռներով, տաք ամառներով: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երեւույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը եւ այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:




Շրջանի սեյսմիկ պայմանները. համաձայն ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի նորմատիվային փաստաթղթի՝ ըստ սեյսմիկ հատկության տարածաշրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax=0.3g արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

## 2.2 ԿԼԻՄԱՆ

***Օդային ավազան.***

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15

հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի
մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից Կապան քաղաքում իրականացվել են մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Ըստ այդ ուսումնասիրությունների ֆոնային կոնցենտրացիաները հետևյալն




են, ազոտի
երկօքսիդը կազմում է 0.012 մգ/մ3, ծծմբի երկօքսիդի պարունակությունը՝ 0.018մգ/մ3: Քաղաքում գործում է 11 դիտակետ: 2023 թվականին Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն

գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Նախորդ տարվա համեմատությամբ ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան աճել է 3%-ով, ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան նվազել է 16%-ով: Քաղաքի մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը միջինից ցածր մակարդակի է՝ 0.62մգ/$մ^3$:

Մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 2 նյութերի) միջինից ցածր մակարդակի է, մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը՝ 0.62 է (ծծմբի երկօքսիդ՝ 0.37մգ/մ3, ազոտի երկօքսիդ՝ 0.25մգ/մ3): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ազոտի երկօքսիդի աճման, իսկ ծծմբի երկօքսիդի նվազման տենդենց:

Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Կապան քաղաքի համար բերված է ստորև աղյուսակում «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» տվյալների համաձայն:

## ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ, ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

| Բնակավայրի անվանումը | | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** | **13** | **14** | **15** | **16** |
| 18. | Կապան | 0.8 | 2.4 | 5.9 | 11.5 | 16.3 | 20.6 | 23.7 | 23.1 | 18.9 | 13.1 | 7.3 | 2.6 | 12.2 | -22.1 | 42.4 |

Աղյուսակ 3 **Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը**

| Բնակավայրի անվանումը | | մ. ա. / մ. ն. | ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | րեկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | |
| | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** | **13** | **14** | **15** |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18. | Կապան | մ. ա. | 8.1 | 9.4 | 12.6 | 18.1 | 22.8 | 27.2 | 30.3 | 30.0 | 25.4 | 19.8 | 14.2 | 9.9 | 19.0 |
| | | մ. ն. | -4.1 | -2.5 | 0.8 | 5.8 | 10.4 | 14.0 | 16.9 | 16.5 | 13.2 | 7.8 | 2.5 | -2.1 | 6.6 |

Աղյուսակ 4 **Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը**

| **Բնակավայրի անվանումը** | **ա/ն** | **ըստ ամիսների, °C** | | | | | | | | | | | | **Տարեկան** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Հունվար** | **Փետրվար** | **Մարտ** | **Ապրիլ** | **Մայիս** | **Հունիս** | **Հուլիս** | **Օգոստոս** | **Սեպտեմբեր** | **Հոկտեմբեր** | **Նոյեմբեր** | **Դեկտեմբեր** | |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** | **13** | **14** | **15** |
| 18. Կապան | ա | 22.9 | 25.6 | 31.6 | 35.5 | 35.5 | 42.4 | 39.1 | 39.5 | 38.4 | 33.5 | 29.5 | 25.9 | 42.4 |
| | ն | -22.1 | -19.0 | -15.7 | -9.7 | -0.3 | 2.2 | 9.0 | 8.3 | 0.1 | -5.8 | -15.0 | -17.5 | -22.1 |

Աղյուսակ 7 **Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար**

| **Ամիս** | **Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)** | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ≤-15 | | ≤-20 | | ≤-25 | | ≤-30 | | ≤-35 | |
| | **մ** | **ա** | **մ** | **ա** | **մ** | **ա** | **մ** | **ա** | **մ** | **ա** |
| | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** |

| Կապան | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 52.Դեկտեմբեր | 0.2 | 5 | | | | | | | | |
| 53.Հունվար | 0.5 | 8 | 0.04 | 3 | | | | | | |
| 54.Փետրվար | 0.3 | 6 | | | | | | | | |

Աղյուսակ 9 **Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)**

(առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն. մ.)

| **Բնակավայրի անվանումը** | **ա.մ. / ն.մ.** | **ըստ ամիսների** | | | | | | | | | | | | **Տարեկան** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Հունվար** | **Փետրվար** | **Մարտ** | **Ապրիլ** | **Մայիս** | **Հունիս** | **Հուլիս** | **Օգոստոս** | **Սեպտեմբեր** | **Հոկտեմբեր** | **Նոյեմբեր** | **Դեկտեմբեր** | |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** | **13** | **14** | **15** |
| 18. Կապան | ա.մ. | 17.1 | 19.0 | 23.1 | 27.3 | 29.8 | 33.1 | 35.1 | 35.2 | 32.5 | 28.5 | 23.4 | 19.3 | 36.2 |
| | ն. մ. | -11.2 | -9.8 | -6.7 | -0.4 | 5.1 | 9.3 | 12.7 | 12.5 | 8.0 | 2.0 | -3.9 | -8.8 | -13.5 |

## ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 18. Կապան | 75 | 75 | 75 | 73 | 74 | 67 | 62 | 63 | 72 | 78 | 78 | 77 | 73 | 75 | 53 | 62 | 44 |

## ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն մմ | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** | **13** | **14** | **15** | **16** |
| 18. Կապան | 27 | 32 | 63 | 72 | 98 | 64 | 31 | 27 | 39 | 46 | 41 | 26 | 566 | 189 | 377 |
| | 30 | 40 | 58 | 76 | 99 | 70 | 176 | 70 | 55 | 51 | 63 | 33 | 176 | | |

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ- արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 22.Կապան | հունվար | 2 | 2 | 29 | 30 | 6 | 5 | 18 | 8 | 45 | 1.0 | ՀվԱրլ | 2.4 | Արլ | 2.3 |
| | | 2.2 | 2.0 | 2.3 | 2.0 | 1.9 | 1.6 | 2.2 | 1.9 | | | | | | |
| | ապրիլ | 2 | 1 | 37 | 32 | 4 | 3 | 12 | 9 | 36 | 1.5 | | | | |
| | | 2.5 | 2.0 | 2.9 | 2.5 | 2.3 | 1.9 | 2.7 | 2.0 | | | | | | |
| | հուլիս | 2 | 2 | 31 | 34 | 6 | 3 | 11 | 11 | 39 | 1.2 | | | | |
| | | 2.2 | 1.9 | 2.7 | 2.4 | 1.9 | 1.6 | 2.0 | 1.6 | | | | | | |
| | հոկտեմբեր | 1 | 1 | 34 | 32 | 6 | 4 | 12 | 10 | 44 | 1.1 | | | | |
| | | 2.1 | 1.7 | 2.5 | 2.2 | 1.9 | 1.6 | 2.0 | 1.3 | | | | | | |

Ստորև ներկայացվում է քաղաքի մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (հնգամյա միջին), որոնք հրապարակված են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (http://meteomonitoring.am/page/1591):

**Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»**

| Բնակչության քանակը (հազար մարդ) | Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3) | | | |
|---|---|---|---|---|
| | Փոշի | Ծծմբի երկօքսիդ (SO2) | Ազոտի երկօքսիդ (NO2) | Ածխածնի օքսիդ (CO) |
| 50 -100 | 0.098 | 0.007 | 0.034 | 1.3 |
| 10-50 | 0.095 | 0.006 | 0.033 | 1.1 |
| <10 | 0.071 | 0.006 | 0.023 | 0.8 |

ՀՀ ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

| Քաղաք | Աղտոտող նյութ | Միջին հնգամյա կոնցենտրացիա (ֆոն), մգ/մ3 |
|---|---|---|
| Կապան | Ազոտի երկօքսիդ<br>Ծծմբի երկօքսիդ | 0.012<br>0.018 |


Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց
Սևանա լիճ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Մարզկենտրոններ
Քաղաքներ
Ակտիվ նմուշառման դիտակայաններ
Պասիվ նմուշառման դիտակետեր
Գետային ցանց
Մարզեր
Բնակավայրեր
Լճեր և ջրամբարներ
ՀՀ պետական սահման
0 10 20 40 կմ

## 2.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում մակերևութային ջրերի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից:

Նախատեսվող գործունեության տարածքն ընդգրկված է Հարավային Ջրավազանի կառավարման տարածքում: Քաղաքով անցնում է Ողջի գետը, որն Արաքսի ձախ վտակն է: Ավազանի մեծ մասն անտառապատ է: Նրա ջրերով են աշխատում Կապանի և Ջրախորի ՀԷԿ- երը: Ջրերն օգտագործվում են նաև ոռոգման համար: Ձախակողմյան վտակներից են՝ Գեղի, Աճանան, Արծվանիկ, աջակողմյաններից՝ Գեղանուշ, Վաչագան: Ողջիի ափերին են գտնվում Քաջարան, Կապան քաղաքները: Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):

*ՀՀ հարավային ջրավազանային կառավարման տարածքի ջրերի որակը հունիս 2023թ-ին*




## 2.4 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային

- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.5 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 23197 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր։ Հանվող հողային զանգվածը կտեղափոխվի Կապանի քաղաքապետարանի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայր:

Համաձայն տարածքում իրականացրած ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տվյալների հողի բերրի շերտը բացակայում է:

Կենսաբազմազանություն

Կապան քաղաքից հարավ-արևելք՝ Ծավ գետի ավազանում է գտնվում բնական սոսիների ռելիկտային պուրակը, որը զբաղեցնում է զրեթե 120 հա, մակերեսով 2-րդն է աշխարհում: Տարածաշրջանն ունի հարուստ բուսական և կենդանական աշխարհ: Տարածքի ավելի քան 30 տոկոսը զբաղեցնում են անտառները, որոնք պտուղների և հատապտուղների յուրահատուկ շտեմարան են: Տարածված ծառատեսակներն են բոխին, կաղնին, հացենին, թեղին, թխկին, սոսենին, բարդին, արոսենին, հոնին, վայրի խնձորենին ու տանձենին, զիհին, ընկուզենին, թթենին, եղնին և այլն: Կապանում բնական պայմանները նպաստավոր են եղել կենդանական աշխարհի պահպանման համար: Լեռնաշխարհում ամենուր տարածված են գայլն ու արջը, աղվեսը, փորսուղը, վայրի խոզը, նապաստակը, այծյամը, վայրի ոչխարը (հայկական մուֆլոն), վայրի քարայծը (բեզոարյան այծ): Իսպառ վերացել են բորենին ու վագրը, սակայն հովազ հազվադեպ դեռ պահպանվում է բարձր լեռնային գոտիներում: Կապանի տարածքը ամբողջովին գտնվում է Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում: Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմաններն են 600- 3900 մ ծ. մ: Բուսական համակեցությունների հիմնական տիպերն են կիսաանապատային, անտառային, տափաստանային, մարգագետնային և նոսրանտառային: Բուսական աշխարհը ՀՀ մյուս ֆլորիստիկ շրջանների համեմատ ամենաբազմազանն է՝ 2000 բուսատեսակ: ՀՀ բույսերի Կարմիր գրքում Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանից գրանցված է 94 բուսատեսակ: Շրջանն աչքի է ընկնում իր հարուստ ծառաթփային բուսականությամբ՝ 190 տեսակներ: Տարարածաշրջանի անտառները լեռնային են, ունեն հիմնականում ջրակարգավորիչ, հակաէրոզիոն և միջավայրապաշտպան նշանակություն: Անտառածածկ տարածքների միջին լրիվությունը կազմում է 0,42: Անտառները հիմնականում տեղաբաշխված են բարձր թեքությունների վրա: Զանգեզուրի ֆլորիստական շրջանի անտառածածկում գերակշռում են կաղնու, բոխու և խառը անտառները: 750-ից 1200 մ բարձրություններում տարածված են արաքսյան կաղնու (Querqusaraxina), 1200-ից 1500 մ վրա վրացական կաղնու (Querqusiberica), 1400-2500 մ վրա արևելյան կաղնու համակեցությունները, 2700մ-ից բարձր տիրապետում են մերձալպյան մարգագետինները: Գիհու նոսր անտառները զբաղեցնում են հարավային դիրքադրության քարքարոտ լեռնալանջերը, տարածված են հիմնականում թույլ հզորության հողերի վրա՝ 500-2000 մ բարձրություններում: Բոխու, սոճու, հունական ընկուզ ենու, խնձորենու և այլ ծառատեսակները զբաղեցնում են տարածքի չնչին մասը:Գործունեության ենթակա և հարակից տարածքները արդեն իսկ կառուցապատված են, զուրկ բնական բուսածածկույթից, չկան կարմիր գրքում գրանցված բույսեր: Կենդանատեսակներ

հանդիպելը դիտարկվող տարածքում քիչ հավանական է, կամ բացառվում է:

Հայցվող տարածքի հարակից տարածքներում կարող է հանդիպել ՀՀ կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները՝

*Խոզանափուշ Գաբրիելյանի* (լատին.՝ Cousiniagabrieljaniae), բարդածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

*Նկարագրություն*

30-40 սմ բարձրության բազմամյա կիսաթփիկ բույս է: Տերևները հերթադիր են, փետրաձև հատված, հիմնական ջղերի ծայրերին կան սուր կոշտ փշեր: Զամբյուղները տանձաձև են, կենտրոնական զամբյուղը միշտ եզրայիններից մեծ է: Ծածկոցի թերթերը համարյա մերկ են, նիզականման հավելուկով, թեթևակի հետ թեքված, փշոտ սրածայրով: Ծաղիկները ծիրանագույն են: Սերմնիկները սև են, կոնուսաձև, թմբիկավոր, ունեն 3 կող: Պապուսը թափվող է:

*Տարածվածություն*

Հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Կապանի շրջակայք): Աճում է նաև Արևելյան Անդրկովկասում (Ջեբրաիլ) :

*Էկոլոգիա*

Աճում է ստորին լեռնային գոտում՝ ծովի մակարդակից 700-800 մ բարձրությունների վրա, շիբլյակում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

*Պահպանություն*

Վտանգված տեսակ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա Սյունիքի մարզում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 կմ²-ից պակաս է: Տեսակը աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

Պահպանություն չի իրականացվում:

*Քաջվարդ նեղատերև* (լատին.՝ Paeonia tenuifolia), քաջվարդազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:



*Նկարագրություն*

Կոնաձև հաստացած արմատներով բազմամյա, գեղազարդային խոտաբույս է: Ցողունի բարձրությունը հասնում է 60 (90) սմ–ի: Կրկնակի փետրաձև տերևները նեղ գծային են, մինչև 2 մմ լայնության մասերով: Վերին տերևները

շրջապատում են ծաղիկը: 6-8 սմ տրամագծով, մուգ կարմիր պսակաթերթերով ծաղիկները ցողունների գագաթներին միայնակ են: Առէջները դեղին են: 2 սմ երկարությամբ պտղատերևիկները շիկավուն թավոտություն ունեն և երեքն են, հազվադեպ՝ երկուսը: Արիլուսով սերմերն ունեն սերմնաթիկնոց:

*Տարածվածություն*

Հայաստանում հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Կապանի շրջակայք) :

*Էկոլոգիա*

Բույսը աճում է ստորին լեռնային գոտում՝ ծովի մակարդակից 700-800 մ բարձրությունների վրա, շիբլյակում: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիսին:

*Պահպանություն*

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է մեկ ոչ մեծ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 կմ$^2$-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

Պահպանություն չի իրականացվում:

Սակայն նշված բույսերը տարածված են ծովի մակերևույթից 700-800մ բարձրությունների վրա, իսկ հայցվող տարածքը գտնվում է 910մ բարձրության վրա:

ՀՀ կարմիր գրքում գրանցված առանձնյակների հանդիպման դեպքում նախատեսվում է իրականացնել պահպանության միջոցառումներ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

2.6 Թափոնների կառավարում

Կապանի տարածքում աղբահանության նպատակով կտեղադրվեն աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/ /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 5.04տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 23խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

M=n*m

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է շինարարության փուլում՝ 42

M=42*120= 5040կգ/տարի:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 23197 խմ ծավալով /գրունտների հետլիցք 2941խմ/, իսկ մնացած 20256խմ կտեղափոխվի Կապան համայնքի կողմից տրամադրվող շինարարության թույլտվությամբ սահմանված վայր:

Այլ վտանգավոր թափոններ, որոնք ենթակա են լիցենզավորված որևէ կազմակերպության հանձնման, չեն առաջանալու, մնացած բոլոր առաջացման ենթակա թափոնները խմբավորված են շինարարական աղբ թափոնատեսակի մեջ:

# 3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

## 3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն ՇՄԱԳ-ում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

## 3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

## 3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

- իրականացնել ջրցան հողային աշխատանքների իրականացման ընթացքում,

- Շինարարական հրապարակը ցանկապատել:

### 3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

### 3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկակակն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Կապանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը:
- Տարածքում (նախնական ցանկով) նախատեսվում է տնկել տարածաշրջանին բնորոշ վերը նշված բուսատեսակները:

- Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար կօգտագործվի հանված բուսական շերտը կավավազի լցոնով: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է ջրցան մեքենաներով, Կապանի հրշեջ կայանից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 36 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 36 ամիս հետո:
- Նախատեսվում է առաջնորդվել հետևյալի դրույթներով՝ ՀՀ կառավարության 2002

թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ <<Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին>>:

### 3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է :

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր 7,2կմ հեռավորության վրա/ համաձայն ՃՀԱ-196/:

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի

նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

### 3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից /ինչը հանդիսանում է կենցաղային աղբի կազմում թուղթը, պոլիէթիլենե տոպրակներ և այլն/ և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման

համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող գործունեության տարածքում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահութան նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն

համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,

- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում շենքում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,

- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էկսկավատորը, իսկ ավարտին գլդոնը: Միաժամանակ այս շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ:

Էկսկավատորը աշխատելու է 4 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլդոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 3 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200կգ/քմ: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

Iաղ = 23 lg mէ – 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/քմ

Iաղ = 13 lg mէ – 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/քմ

Որտեղ mէ = Km – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ$^2$,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200կգ/քմ

K=1,3 m է= 1,3 x 200=260

Լաղ = 13lg mէ -13 = 18,2 դԲ

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

LAտար = LAէկվ - Լաղ = 85– 18,2 = 66,8 դԲ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հաղիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RUտ p ըստ աղուսյակ 2 ՝ կազմում է միջնը 50 դԲ:

LAտար = 66,8 – 50 = 16,8 դԲ

